«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«24» հուլիսի 2015թ.

**Հաստատում եմ՝**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

_____ Հ. Թունյան

ԳԲԽ-26/15 բողոքը քննող

հանձնաժողովին

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի 09.07.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

## 1. «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 09.07.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի,

գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները: Յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Հայաստանի զարգացման հիմնադրամի կողմից քայլարշավային երթուղիների գծանշման և մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է թիվ «ՀԶՀ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգ: Ընթացակարգին մասնակցել են երկու կազմակերպություն՝ «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» և «Նատուրա տուր» ՍՊ ընկերությունները:

«ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի գնային առաջարկը կազմել է 1.495.500 ՀՀ դրամ, իսկ «Նատուրա տուր» ՍՊԸ-ի գնային առաջարկը՝ 5.000.000 ՀՀ դրամ, այսինքն Ընկերության գնային առաջարկը 3.5 անգամ ավելի ցածր է, քան մյուս մասնակցինը:

Ընկերությունը հայտնել է, որ «ՀԶՀ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 26.06.2015թ. գրությամբ դիմել է «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին և հայտնել, որ Ընկերությունը ճանաչվել է «ՀԶՀ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից, և միաժամանակ ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով, գնահատող հանձնաժողովը առաջարկել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ Ընկերության կողմից ներկայացված ցածր գնային առաջարկի վերաբերյալ:

«ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն նշել է, որ չնայած այն հանգամանքին, որ Ընկերությունը չի կարողացել գտնել Պատվիրատուի կողմից հաստատված գնումների պլանում նշված աշխատանքների ձեռքբերման համար նախատեսված նախահաշվային գինը, որից պարզ կլիներ Ընկերության կողմից ցածր գին ներկայացնելու հանգամանքը, սակայն այնուամենայնիվ, ղեկավարվելով վերոնշյալ կարգով, 29.06.2015թ. ներկայացրել է գնային առաջարկով ներկայացված գնի ցածր լինելու վերաբերյալ մանրամասն նկարագրություն:

«ՀԶՀ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. հուլիսի 2-ի ժամը 10:30-ի կայացված նիստի թիվ 4-րդ արձանագրության 1-ին մասի 2-րդ կետով չհիմնավորված ցածր գնային առաջարկի

վերաբերյալ «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հիմնավորումները համարվել են անբավարար և «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է: Արձանագրության 3-րդ կետով հաստատվել է «ՀՋՀ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման այդյունքները, մասնավորապես, «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար, իսկ «Նատուրա տուր» ՍՊԸ-ի հայտը՝ բավարար: Նույն արձանագրության 4-րդ կետով որպես «ՀՋՀ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է հայտարարվել «Նատուրա տուր» ՍՊԸ-ն:

«ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն գտնում է, որ Ընկերության կողմից ներկայացված լրացուցիչ հիմնավորումները եղել են բավարար հիմնավորված, իսկ Պատվիրատուն, «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելով, խախտել է 10.02.2011թ. 168-Ն որոշման 47-րդ կետի 3-րդ ենթակետը:

«ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն հայտնել է, որ «ՀՋՀ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. հուլիսի 2-ի ժամը 10:30-ի կայացված նիստի թիվ 4-րդ արձանագրության 1-ին մասի 3-րդ կետով հաստատվել է «ՀՋՀ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման այդյունքները և «Նատուրա տուր» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է հրավերով նախատեսված պահանջներին բավարարող:

«ՀՋՀ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերի թիվ 4-րդ հավելվածի /գնի առաջարկի օրինակելի ձևի/ համաձայն՝ գնի առաջարկը անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ ձևով.

(ՀՀ դրամ)

| Չափաբաժինների համարները | Աշխատանքի անվանումը | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ* | Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6=3+4+5 |
| 1 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>> | | | | |

«Նատուրա տուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում բացակայում է տառերով գրված ընդհանուր գինը:

Տվյալ դեպքում Ընկերությունը գտնում է, որ «ՀՋՀ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. հուլիսի 2-ի ժամը 10:30-ի կայացված նիստի թիվ 4-րդ արձանագրության 1-ին մասի 3-րդ կետով «Նատուրա տուր» ՍՊԸ-ի հայտը հրավերով նախատեսված պահանջներին բավարար գնահատվել է խախտումով, քանի որ ակնհայտ պարզ երևում է, որ «Նատուրա տուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնի առաջարկում բացակայել է տառերով գրված ընդհանուր գինը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:

«ՀՋՀ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերի թիվ 4-րդ հավելվածի /գնի առաջարկի օրինակելի ձևի/ համաձայն՝ գնի առաջարկի 6-րդ սյունյակում անհրաժեշտ է լրացնել առաջարկված ընդհանուր գինը՝ տառերով և թվերով, սակայն «Նատուրա տուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնի առաջարկում բացակայել է տառերով գրված ընդհանուր գինը, որի արդյունքում խախտվել են ինչպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, այնպես էլ «ՀՋՀ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերի թիվ 4-րդ հավելվածով սահմանված պահանջները:

Ընկերությունը հայտնել է, որ գնահատող հանձնաժողովը, հայտնաբերելով հրավերով սահմանված պահանջների անհամապատասխանություն «Նատուրա տուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնի առաջարկում, պետք է մերժեր վերջինիս գնային առաջարկը՝ ընթացակարգի հրավերին չհամապատասխանելու հիմքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքը ինքնաբերաբար չի կասեցնում պայմանագրի կնքման ընթացակարգը, սակայն մինչև խորհրդի կողմից սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված որոշման ընդունումը պատվիրատուն իրավունք չունի պայմանագիր կնքելու:

Հաշվի առնելով վերագրյալը՝ «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն խնդրել է դադարեցնել Հայաստանի զարգացման հիմնադրամ կողմից քայլարշավային երթուղիների գծանշման և մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՀԶՀ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. հուլիսի 2-ի ժամը 10:30-ի կայացված նիստի թիվ 4-րդ արձանագրության 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով կայացված որոշումները:

**2. Հայաստանի զարգացման Հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը**

«ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի 09.07.2015թ. ներկայացրած բողոքի վերաբերյալ Հայաստանի զարգացման հիմնադրամը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 18.07.2015թ. ՀԶՀ-Գ-15-239 գրությամբ հայտնել է, որ 2015թ. հունիսի 25-ին «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից ստացվել է «ՀԶՀ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու հայտ, որով վերջինիս կողմից ներկայացվել է գնային առաջարկ՝ 1.495.500 ՀՀ դրամի չափով: 2015թ. հունիսի 26-ին կայացել է Ընթացակարգի հայտերի բացման նիստը, որի ընթացքում, ղեկավարվելով Կարգի 44-րդ կետի 1-ին ենթակետով, գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարել է բացված և հրապարակել է գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված, որը համապատասխանում է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնին: Վերոգրյալի մասին նշված է հայտերի բացման նիստի արձանագրության 1-ին կետում: Ուստի, «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն առանց որևէ դժվարության կարող էր համեմատել իր կողմից ներկայացված գնային առաջարկը հայտով ներկայացված առավելագույն գնի հետ:

Միևնույն ժամանակ Պատվիրատուն հայտնել է, որ տվյալ գնման հայտով առավելագույն գինը կազմել է 5.000.000 ՀՀ դրամ, մինչդեռ Ընկերության ներկայացրած գնային առաջարկը եղել է 1.495.500 ՀՀ դրամ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության ներկայացրած գնային առաջարկը նվազագույնն էր և նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից պակաս է եղել, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետով և 47-

րդ կետի 3-րդ ենթակետով, Ընկերությանը ճանաչել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից և որոշում է կայացրել առաջարկել Ընկերությանը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներակայացնել լրացուցիչ հիմնավորումներ: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առաջարկությանն ի պատասխան՝ Ընկերության կողմից ներկայացվել է գնային առաջարկի ձևավորման վերաբերյալ գրություն՝ առանց փաստաթղթային հիմնավորումների: Ընկերության կողմից ներկայացված գրությունում նշված էր, որ Ընկերության և նրա աշխատակիցների արխիվներում կուտակված նյութերը հնարավորություն կտան Ընկերությանը իրականացնել քայլարշավային երթուղիների գծանշումը և մշակումը՝ առանց նշելու, թե վերը նշված արխիվներում ինչ նյութեր են առկա, ինչպես նաև գրությամբ ներկայացված գնագոյացման մեջ ներառված չեն եղել Ընթացակարգի տեխնիկական բնութագրով պահանջվող լուսանկարների, տեսահոլովակների և GPS մշակման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

Հիմք ընդունելով վերոհիշյալը և ղեկավարվելով կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով՝ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Ընկերության կողմից ներակայացված հայտը գնահատել անբավարար:

Հաշվի առնելով վերահիշյալը՝ Պատվիրատուն գտնում է, որ Ընկերության բողոքն անհիմն է և խնդրում է այն չբավարարել:

**3. ԳԲԽ-26/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ԳԲԽ-26/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Հայաստանի զարգացման հիմնադրամի կարիքների համար քայլարշավային երթուղիների գծանշման և մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով 15.06.2015թ. հայտարավել է «ՀԶՀ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցել են «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» և «Նատուրա տուր» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիրգնման ժամանակացույցով սահմանվել է **«GPS կոորդինատներ»** ենթաբաժինը, որով պահանջվել է մանրամասն նկարագրություն երթուղու երակարության, քայլքի

տևողության, ծովի մակարդակից բարձրության տատանման, ամենահարմար ճամբարատեղերի, մոտակա խմելու ջրի առկայության, գետանցումների մասին:

3. Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիրգնման ժամանակացույցով սահմանվել է նաև «Լուսանկարներ և տեսահոլովակներ» ենթաբաժինը, որով պահանջվել է յուրաքանչյուր երթուղու համար հիսուն լուսանկար և առնվազն մեկ տեսահոլովակ:

4. Ընթացակարգի հրավերի թիվ 4 հավելվածի՝ գնի առաջարկի օրինակելի ձևի համաձայն՝ առաջարկված «Ընդհանուր գին» սյունակը պետք է լրացվի *տառերով և թվերով*:

5. «Նատուրա տուր» ՍՊԸ-ի կողմից ներակայցված գնային առաջարկում «Ընդհանուր գին» սյունակում բացակայել է **տառերով գրված** ընդհանուր գինը:

6. «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի գնային առաջարկը կազմել է 1.495.500 ՀՀ դրամ:

7. Պատվիրատուն 26.06.2015թ. գրությամբ դիմել է «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին և հայտնել, որ Ընկերությունը ճանաչվել է «ՀՋՀ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից և, ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 3-րդ ենթակետով, Ընկերությանը առաջարկել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ վերջինիս կողմից ներկայացված ցածր գնային առաջարկի վերաբերյալ:

8. «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն 29.06.2015թ. Պատվիրատուին է ներկայացրել լրացուցիչ հիմնավորումներ՝ ներկայացված ցածր գնային առաջարկի վերաբերյալ, առանց հիմնավորող կից փաստաթղթերի:

9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 2015թ. հուլիսի 2-ի ժամը 10:30-ի կայացված նիստի թիվ 4-րդ արձանագրության 1-ին մասի.

- 2-րդ կետով չհիմնավորված ցածր գնային առաջարկ ներկայացնելու վերաբերյալ «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հիմնավորումները համարվել են անբավարար:

- 3-րդ կետով հաստատվել է Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության

գնահատման այդյունքները՝ «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի հայտը գնահատելով անբավարար, «Նատուրա տուր» ՍՊԸ-ի հայտը՝ բավարար:

- 4-րդ կետով որպես «ՀԶՀ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է հայտարարվել «Նատուրա տուր» ՍՊԸ-ն:

**4. ԳԲԽ-26/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.**

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի 09.07.2015թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, Հայաստանի զարգացման հիմնադրամի գրությունը և կից փաստաթղթերը, գտնում է, որ «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը ենթակա է մասնակի բավարարման հետևյալ հիմնավորմամբ.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հրապարակվում են յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը՝ տառերով և թվերով արտահայտված:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 44-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հայտերի բացման նիստում հրապարակվում են բացված հայտերով ներկայացված գները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը:

Նույն կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկները:

ՀՀ ֆինանսների նախարարի 2015թ. մարտի 30-ի թիվ 169-Ա հրամանով հաստատված են գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը, որոնք տեղադրված են ՀՀ ֆինանսների նախարարության www.gnumner.am պաշտոնական կայքի «Օրենսդրություն» բաժնի «Գնումների գործընթացներում կիրառվող փաստաթղթերի օրինակելի ձևեր» ենթաբաժնում:

Վերը նշված պաշտոնական կայքի «Օրենսդրություն» բաժնի «գնումների գործընթացներում կիրառվող փաստաթղթերի օրինակելի ձևեր» ենթաբաժնում տեղադրված պարզեցված ընթացակարգի հրավերի օրինակելի ձևի «Գնի առաջարկ» հավելվածով սահմանված վավերապայմանների համաձայն՝ մասնակիցը գնի առաջարկը ներկայացնում է տառերով և թվերով:

Ըստ «ՀՁՀ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերի թիվ 4 հավելվածի (գնի առաջարկ) օրինակելի ձևի՝ առաջարկված գինն անհրաժեշտ է ներկայացնել տառերով և թվերով արտահայտված:

Վերոգրյալից հետևում է, որ եթե մասնակիցը գնի առաջարկը ներկայացրել է միայն թվերով և բացակայում է տառերով գրվածը, ապա մասնակցի ներկայացրած հայտը գնահատվում է հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող և մերժվում է:

Նկատի ունենալով, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը, քանի որ «Նատուրա տուր» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանել Ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին, իսկ Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բավարար են գնահատվում միայն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, ուստի գտնում ենք, որ այս մասով «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

2. Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝ ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի

կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Պատվիրատուն, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով, 26.06.20115թ. գրությամբ առաջարկել է Ընկերությանը, որպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի, երեք աշխատանքային օրվա ընթացքում ներակայցնել լրացուցիչ հիմնավորումներ՝ ներկայացված ցածր գնային առաջարկի վերաբերյալ:

Ի պատասխան Պատվիրատուի գրության՝ Ընկերությունը 29.06.2015թ. ներկայացրել է ներկայացված ցածր գնային առաջարկի վերաբերյալ լրացուցիչ հիմնավորումներ:

Վերոհիշյալ հիմնավորմամբ Ընկերությունը հայտնել է, որ «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն ունի Հայաստանի Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տուրիստական երթուղիների ուսումնասիրության փորձ, ինչպես նաև ընկերության և նրա աշխատակիցների անձնական արխիվներում կուտակված են ոչ սակավաթիվ նյութեր, ուստի Ընկերությունը կարող է կատարել քայլարշավային երթուղիների գծանշման և մշակման աշխատանքները իր առաջարկած գնով՝ 1 495 500 ՀՀ դրամով և սեղմ ժամկետում: Ընկերությունը տեղեկացրել է, որ յուրաքանչյուր երթուղու համար երկուսից երեք հոգանոց խմբին վճարվելու է 25 890 ՀՀ դրամ, այսինքն 40 երթուղու համար՝ 1 035 600 ՀՀ դրամ: Մոտավորապես 13,4 տոկոս կլինեն չնախատեսված ծախսերը, որոնք գումարային արտահայտությամբ կկազմեն 200 397 ՀՀ դրամ: Հարկերը, տուրքերը և այլ վճարները կկազմեն 149 000 ՀՀ դրամ: Իսկ Ընկերությունը, որպես զուտ շահույթ, ակնկալում է ստանալ 110 500 ՀՀ դրամ:

Կատարված ուսումնասիրության արդյունքում Ընկերության կողմից ներկայացված վերոհիշյալ հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից համարվել են ոչ բավարար, քանի որ Ընկերության կողմից չի նշվել, թե հիմնավորման մեջ նշված արխիվներում ինչ նյութեր են առկա, ինչպես նաև գրությամբ ներկայացված գնագոյացման մեջ ներառված չեն եղել Ընթացակարգի տեխնիկական բնութագրով պահանջվող լուսանկարների, տեսահոլովակների և GPS մշակման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

Գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի կողմից չեն խախտվել Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները, քանի որ հանձնաժողովը գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի 09.07.2015թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի՝ դադարեցնել Հայաստանի զարգացման հիմնադրամի կողմից քայլարշավային երթուղիների գծանշման և մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՀԶՀ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտը բավարար գնահատելու մասին 2015թ հուլիսի 2-ի ժամը 10:30-ի կայացված նիստի թիվ 4-րդ արձանագրության 1-ին մասի 3-րդ կետի 2-րդ ենթակետով և 4-րդ կետով կայացված որոշումները, իսկ թիվ 4-րդ արձանագրության 1-ին մասի 2-րդ կետով և 3-րդ կետի 1-ին ենթակետով կայացված որոշումները դադարեցնելու պահանջի մասով բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ.Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-26/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Մանուկյան